ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/280

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
Մասնակից՝ «Էլմարկետ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, ձմեռային արտահագուստի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18725-2020 գրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 19.10.2018թ.-ի թիվ 20/643 գրության հիման վրա, 26.10.2018թ.-ին «Էլմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի (Է. Սարգսյանի) 30.10.2018թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ԷՍ-2018/155 համարի ծածկագիրը: 02.11.2018թ.-ին, 13.11.2018թ.-ին, 23.11.2018թ.-ին և 27.11.2018թ.-ին նշանակվել են նիստեր:

26.11.2018թ.-ին «Էլմարկետ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Էմիլ Սարգսյանի՝ 27.08.2018թ.-ի «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-էլեկտրատեխնիկա» ծածկագրով հայտարարված էլեկտրոնայի աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի 27.11.2018թ.-ի թիվ ԵԴ/26584/02/18 որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Միաժամանակ Դատարանի կողմից 27.11.2018թ.-ին կայացվել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշում, այն է՝ հայցի ապահովման նպատակով արգելվել է /կասեցվել է/ պատասխանողներից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, ՍՑ-ԷՍ-2018/155 ընթացակարգով հարուցված՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով հարուցված գործը քննելը կամ քննությունը շարունակելը, մինչև վերջնական դատական ակտի կայացումը:

Բողոքներ քննող անձի (Է. Սարգսյանի) 27.11.2018թ.-ին կայացված թիվ ՍՑ-ԷՍ-2018/155 որոշմամբ ընթացակարգի քննությունը կասեցվել է՝ մինչև ԵԴ/26584/02/18 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի կայացումը:

Դատարանի 10.02.2020թ.-ի թիվ ԵԴ/26584/02/18 որոշմամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Էմիլ Սարգսյանի՝ 27.08.2018 թվականի «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-էլեկտրատեխնիկա» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի մասին, թողնվել է առանց քննության:

Մասնակցի կողմից 26.02.2020թ.-ին ներկայացվել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 21.05.2020թ.-ին գործը ընդունվել է վարույթ, իսկ 10.07.2020թ.-ին կայացվել է վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.12.2020թ.-ին «Էլմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին (Լ. Օհանյանին) գործը մակագրվել է 15.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 16.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/280 համարի ծածկագիրը:

24.12.2020թ.-ին և 14.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.01.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>**.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 19.10.2018թ.-ի թիվ 20/643 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էլմարկետ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. **<u>«Էլմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 16.12.2020թ.-ին գրությամբ դիմել է «Էլմարկետ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.12.2020թ.-ի թիվ

26/26-1/18725-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում հետևյալ բովանդակությամբ.

«Մույնով հայտնում եմ, որ «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն առաջին անգամ աճուրդի /e-auction համակարգով/ մասնակցելով «N ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ-1» ծածկագրով մրցույթի ժամանակ, ամբողջ խմբաքանակի գնի փոխարեն նշել է միավորի գինը, քանի որ առկա է եղել ապակողմնորոշում: Դրանից մեկն այն է, որ e-auction համակարգը այնպես է մշակված, որ թյուրիմացության մեջ է գցում մասնակիցներին, քանի որ աճուրդի ժամանակ բացված պատուհանիկում հստակ չի նշվում, որ ամբողջ խմբաքանակի գինն է պահանջվում: Դրա հետևանքով, նույն մրցույթի ժամանակ ոչ միայն «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն է միավորի գին առաջարկել, այլ նաև մի քանի այլ կազմակերպություններ:

Ստեղծված պայմաններում ավելի քան հստակ է, ինչը Դուք էլ կարող եք տեսնել, որ համակարգի ոչ ամբողջական և սպառիչ գրված կամ լրացված լինելն ինքնին հանգեցրել է բազմաթիվ ընկերությունների համար ոչ բարենպաստ հանգամանքի:

Կոնկրետ դեպքում սույն գործով առավել քան հստակ է, որ մեր ընկերությունը հայտնվել է թերի համակարգի կիրառելության առջև, ուստի տվյալ դեպքում Բողոքներ քննող անձը պետք է ամբողջական և բազմակողմանի գնահատման առարկա դարձնի այս հանգամանքը:

Այսպիսով իրավացի չի լինի թյուրիմացության հետևանքով կազմակերպություններին զրկել պետական գնումներին մասնակցության իրավունքից, այն էլ երկու տարով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ «էլմարկետ» ՍՊԸ-ն բազմաթիվ անգամներ բարեխղճորեն մասնակցում է պետական գնումների գործընթացին և պատվով կատարում պայմանագրով սպանձնած իր բոլոր պարտականությունները, ապահովելով աշխատատեղեր:

Ուստի խնդրում եմ Ձեզ տրված լիազորությունների սահմաններում հնարավորինս բարեխղճորեն վարվել ստեղծված իրակիճակի հանդեպ:

Միաժամանակ հուսով ենք, որ օրենքի ներքոգրյալ դրույթը այս դեպքում կկիրառվի: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝Գնումների հետ

կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն:»:

4. **ՍՅ-LO**-2020/280 **<u>ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ձմեռային արտահագուստի ձեռքբերման նպատակով 20.08.2018թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էլմարկետ» ՍՊԸ-ն:

ii. «Էլմարկետ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին ու հրավերի պահանջներին ամապատասխան ներկայացնում է հայտ:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 31.08.2018թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին, 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էլմարկետ» ՍՊԸ-ին:

iv. Հանձնաժողովի 10.09.2018թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, Հանձնաժողովը որոշել է 1-ին, 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչել «Էլմարկետ» ՍՊԸ-ին և վերջինիս հետ կնքել պայմանագիր:

v. 10.09.2018թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր (11.09.2018թ.-20.09.2018թ. ներառյալ):

vi. Պատվիրատուն, Մասնակցին ներկայացնելով «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն և կից գրությամբ՝ պայմանագրի ապահովման հետ միասին ներկայացնել ՀՀ ազգային անվտանգության ծառայություն:

vii. Մասնակիցը 09.10.2018թ.-ին դիմել է Պատվիրատուին հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Էլմարկետ» ՍՊԸ-ն չի կարող կնքել «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ-1» պայմանագիրը, քանի որ «Էլմարկետ» ՍՊԸ-ն մասնակցելով աճուրդի /e-auction համակարգով/ առաջին անգամ, սխալմամբ ամբողջ խմբաքանակի գնի փոխարեն նշել է միավորի գինը: Նշեմ որ, պատճառներից մեկը նաև այն է, որ e-auction համակարգը այնպես է մշակված, որ թյուրիմացության մեջ է գցում մասնակիցներին, թանի որ աճուրդի ժամանակ բացված պատուհանիկում հստակ չի նշվում, որ ամբողջ խմբաքանակի գինն է պահանջվում: Դրա հետևանքով, նույն մրցույթի ժամանակ ոչ միայն «Էլմարկետ» ՍՊԸ-ն է միավորի գին առաջարկել, այլ նաև մի քանի այլ կազմակերպություններ: Այսպիսով իրավացի չի լինի թյուրիմացության հետևանքով կազմակերպություններին զրկել պետական գնումներին մասնակցության իրավունքից, այլն էլ երկու տարով: Ուստի խնդրում եմ Ձեզ տրված լիազորությունների սահմաններում հնարավորինս բարեխղճորեն վարվել ստեղծված իրավիճակի հանդեպ:»:

viii. Հանձնաժողովի 19.11.2018թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Մասնակցին 26.09.2018թ.-ին պայմանագիր կնքելու և պայմանագրի ապահովում ներկայացնելու մասին ծանուցումը ու «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված գրությունը, Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պայմանագիր չկնքելու, ինչպես նաև պայմանագրի ապահովում չներկայացնելու պատճառով:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18725-2020 գրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (08.02.2018թ.-ի թիվ 104-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում

պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ներկայացված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում

պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովում, ապա վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց հաղթող մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ձմեռային արտահագուստի ձեռքբերման նպատակով 20.08.2018թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է համակարգի միջոցով:

Հրավերի 5-րդ կետի 5.2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով՝ արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Հրավերի 7-րդ կետի 7.4-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդի ընթացքում ըստ չափաբաժինների կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին այդ չափաբաժնի մասով ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Ընդ որում նվազեցվող գնային առաջարկները ներկայացվում են պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ձմեռային արտահագուստի ձեռքբերման

նպատակով 20.08.2018թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էլմարկետ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 31.08.2018թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին, 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հանձնաժողովի 10.09.2018թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, որոշում է կայացվել 1-ին, 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչել «Էլմարկետ» ՍՊԸ-ին և «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայնվերջինիս հետ կնքել պայմանագիր, ինչով պայմանավորված 10.09.2018թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր (11.09.2018թ.-20.09.2018թ. ներառյալ):

Պատվիրատուն, Մասնակցին ներկայացնելով «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» ծածկագրով պայմանագրի նախագիծը, խնդրել է պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն և կից գրությամբ՝ պայմանագրի ապահովման հետ միասին ներկայացնել ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ինչին ի պատասխան Մասնակիցը 09.10.2018թ.-ին դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ չի կարող կնքել «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ-1» պայմանագիրը, քանի որ «Էլմարկետ» ՍՊԸ-ն մասնակցելով աճուրդի /e-auction համակարգով/ առաջին անգամ, սխալմամբ ամբողջ խմբաքանակի գնի փոխարեն նշել է միավորի գինը:

Հանձնաժողովի 19.11.2018թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Մասնակցին 26.09.2018թ.-ին պայմանագիր կնքելու և պայմանագրի ապահովում ներկայացնելու մասին ծանուցումը ու «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը, Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պայմանագիր չկնքելու, ինչպես նաև պայմանագրի ապահովում չներկայացնելու պատճառով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը

ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ ներկայացված այն պնդմանը, որ «Էլմարկետ» ՍՊԸ-ն առաջին անգամ մասնակցելով էլեկտրոնային աճուրդի՝ e-auction համակարգի միջոցով, թիվ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ-1» ծածկագրով մրցույթի արդյունքում ամբողջ խմբաքանակի գնի փոխարեն նշել է միավորի գինը, քանի որ առկա է եղել ապակողմնորոշում և դրանից մեկն այն է, որ e-auction համակարգը այնպես է մշակված, որ թյուրիմացության մեջ է գցում մասնակիցներին, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ձմեռային արտահագուստի ձեռքբերման նպատակով 20.08.2018թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է համակարգի միջոցով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով՝ արժեք (ինքնարժեքի և

կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Աճուրդի ընթացքում ըստ չափաբաժինների կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին այդ չափաբաժնի մասով ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Ընդ որում նվազեցվող գնային առաջարկները ներկայացվում են պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Վերոնշյալով պայմանավորված՝ բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակիցը նախքան էլեկտրոնային աճուրդին մասնակցելը պետք է ծանոթանար Աճուրդի հրավերով սահմանված պայմաններին: Պայմաններին ծանոթանալու արդյունքում պարզ կլիներ, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, որպիսի պայմաններում Մասնակցի մոտ որևէ ապակողմնորոշում կամ թյուրիմացություն չէր առաջանա e-auction համակարգի միջոցով գնային առաջարկ ներկայացնելու համար:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-3/18-ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությունը նույնաբովանդակ խնդրի կապակցությամբ 03.10.2018թ.-ի թիվ 01.1/26-1/7883-18 գրությամբ հայտնել է իր դիրքորոշումը, մասնավորապես նշվել է, որ էլեկտրոնային աճուրդով իրականացվող գնման գործընթացներին մասնակցության հետ կապված պայմանները սահմանվում են հրավերներով և մասնակիցն ինքն է ապահովում դրանց համապատասխան գործողությունների իրականացումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էլմարկետ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը և պայմանագրի կատարման ապահովումները, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18725-2020 գրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/280 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էլմարկետ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**